ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 Նոյեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

166
(2832)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԻԱՅՆ ԲՈՑԱՇՈՒՆՉ ԵԼՈՒՅԹՆԵՐ

44-օրյա պատերազմի հանգամանքները քննող ԱԺ հանձնաժողովը, թերեւս, իր ուրույն տեղն է զբաղեցնում խորհրդարանական մյուս անօգուտ ու ձեւական բնույթ կրող հանձնաժողովների շարքում: Հիշեցնենք, որ հանձնաժողովը ստեղծվել էր 2022թ.-ի փետրվարի 10-ին՝ ՔՊ-ի նախաձեռնությամբ: Թերեւս հանձնաժողովը կոչված էր ուսումնասիրելու 44-օրյա պատերազմի հանգամանքները, սակայն մինչ օրս, բացի Անդրանիկ Քոչարյանի բոցաշունչ ու աղմկահարույց հայտարարություններից, ելույթներից, նրա ղեկավարած հանձնաժողովը ոչ մի ուշագրավ բացահայտում չի արել: Ընդ որում՝ ուշագրավ է, որ պատերազմի հանգամանքների քննություն իրականացնում են այն իշխանությունները եւ նրա արբանյակ քաղաքական ուժերի ներկայացուցիչները, որոնք չեն կարող որեւէ դեպքում Նիկոլ Փաշինյանին՝ որպես գերագույն գլխավոր հրամանատարի մեղադրել: Ընդդիմադիր ուժերը հրաժարվել են մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին: Ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի 20-րդ հոդվածի՝ Քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը վեց ամիս է, որը կարող է երկու անգամ հանձնաժողովի առաջարկությամբ, Ազգային ժողովի որոշմամբ երկարաձգվել մինչեւ վեցական ամսով: Այս հանձնաժողովի գործունեությունն արդեն երկու անգամ երկարացվել է՝ 2022թ.-ի հոկտեմբերին 5-ին եւ 2023թ. մայիսի 3-ին. հանձնաժողովի գործունեությունն արդեն երկրորդ անգամ է 6 ամսով երկարաձգվել, այսինքն՝ այն այլեւս չի կարող երկարաձգվել: «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանն օրերս ԱԺ ամբիոնից հայտարարեց, որ Անդրանիկ Քոչարյանի ղեկավարած քննիչ հանձնաժողովն ապօրինի է գործում, քանի որ դրա լիազորությունները օգոստոսի 11-ից ավարտվում են. չնայած սրան՝ Անդրանիկ Քոչարյանը մտադիր է մինչեւ դեկտեմբեր երկարաձգել հանձնաժողովի գործունեության ժամկետը: Անդրանիկ Քոչարյանը, ի պատասխան Արծվիկ Մինասյանի հայտարարություններին, գրություն-պարզաբանում է ներկայացրել պատգամավորին, թե 2022թ.-ի եւ 2023թ.-ի ամռանը պատգամավորներն արձակուրդում են եղել, ուստի հանձնաժողովի գործունեությունը պետք է երկարացվի մինչեւ դեկտեմբեր, փաստացի՝ արդեն երրորդ անգամ, ինչն օրենքի խախտում է, եւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը դրա իրավունքը չունի: Այն, որ այս պահին գործում է այդ հանձնաժողովը, արդեն ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի բացթողումն է, քանի որ նա օրենքով պարտավոր է ԱԺ բնականոն գործունեությունը ապահովել, սակայն չի կարողանում: Ի դեպ, այս իշխանությունների օրոք՝ 2019թ.-ին, եւս մեկ հանձնաժողով էր ստեղծվել՝ 2016 թվականի ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքները ուսումնասիրելու նպատակով, որը եւս այդպես էլ ընդամենը ձեւական բնույթ էր կրում եւ իրականում որեւէ բացահայտում չարեց:



Երեւանի քաղաքապետարանը հերթական խոստումներն է տալիս եւ ներկայացրել է Երեւանի քաղաքապետարանի զարգացման ծրագիրը՝ 2024 թվականի համար: Օրինակ՝ տրանսպորտի ոլորտում 2024 թվականին նախատեսվում է իրականացնել Երեւանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի եւ միասնական տոմսային համակարգի ներդրման գործընթաց, հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում, մետրոպոլիտենի վագոնների արդիականացում, նոր ավտոբուսների կամ էլեկտրաբուսների ձեռք բերում (18 մետր 249 հատ եւ 8.5 մետր երկարությամբ 171 հատ), նոր տրոլեյբուսների (71 հատ) ձեռք բերում: Կոմունալ տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել Երեւան քաղաքի բազմաբնակարան շենքերի թվով 600 վերելակների փոխարինում, բազմաբնակարան շենքերի հարթ եւ թեք տանիքների վերանորոգում, բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում: Արտաքին լուսավորության ոլորտում նախատեսվում է իրականացնել Երեւան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի ընթացիկ շահագործման, պահպանման եւ արդիականացման աշխատանքներ, «Երեւանի քաղաքային լուսավորություն» ծրագրի շրջանակում Երեւան քաղաքի 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացում: Բնապահպանության ոլորտում նախատեսվում է իրականացնել Կենդանաբանական այգու ընդլայնում: Իհարկե, այս ոլորտներում խոստումներ շատ ենք լսել, մնում է՝ դրանք իրականություն դառնան:



Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սարգիս Խանդանյանը քաղաքական դաշտ է եկել հեղափոխությունից հետո: Ինչպես ներկայիս իշխանությունների մեծ մասը, այդպես էլ Խանդամյանը նախկին լրագրող է: Նա 2022 թվականի գույքի եւ եկամուտների մասին հայտարարագրում հայտարարագրել է 1 անհատական բնակելի տուն, 1 բնակարան բազմաբնակարան շենքում: Բնակարաններից մեկը ձեռք է բերել, ավելի ճիշտ՝ նրա անունով է գրանցվել 1991 եւ 1995 թվականներին Գեղարքունիքի Գավառ համայնքում (համատեղ սեփականությամբ): Տրանսպորտային միջոց Խանդանյանը չի հայտարարագրել: Խանդանյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 500 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցներ պատգամավորը չի հայտարարագրել: Նրա՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 9 մլն 881 հազար դրամ, որից 7 մլն 962 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 22 մլն 215 հազար դրամ, որը, ըստ նշված հայտարարագրի համապատասխան կետի, հիփոթեքով բնակարանի մայր գումարի մնացորդն է: Հենց այս պատճառով էլ Խանդանյանը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 1 մլն 918 հազար դրամ, որը եկամտահարկի վերադարձի սկզբունքով հիփոթեքի մայր գումարի մնացորդը մարելու համար է: Սարգիս Խանդանյանը այն պատգամավորն է որը ոչնչով աչքի չի ընկել խորհրդարանում: ՔՊ-ականների համար շոկային էր նաեւ այն, որ այս անփորձ պատգամավորին առաջադրել էին Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, ինչն էլ թեժ քննարկման առիթ էր դարձել:

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել, թե ինչ քրեական վարույթի շրջանակներում են Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանի՝ անվտանգության եւ տարհանվածների հարցերով ներկայացուցիչ Վահան Բադասյանին կանչել ՀՀ քննչական կոմիտե՝ հարցաքննության: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նրան հարցաքննել են ՀՀ քրեական օրենսգրքի 330 հոդվածի շրջանակներում (Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը): Armlur.am-ը գրել էր, որ Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանի՝ անվտանգության եւ տարհանվածների հարցերով ներկայացուցիչ, Հադրութի պաշտպանական շրջանի առաջին գումարտակի հրամանատար Վահան Բադասյանին հրավիրել են ՀՀ քննչական կոմիտե՝ հարցաքննության: Տեղեկությունը փորձեցինք պարզել նրա պաշտպան Ռաֆայել Մարտիրոսյանից, որը հաստատեց տեղեկությունը: Իսկ թե ինչ քրեական գործով են Բադասյանին կանչել հարցաքննության, պաշտպան Մարտիրոսյանը չցանկացավ մանրամասնել: Մեզ հայտնի դարձավ, որ նա իր սոցիալական էջում հրապարակային խոսք է գրել, որը, ըստ իրավապահների, բռնության կոչ է, իսկ թե կոնկրետ որ գրառման համար են նրան տարել հարցաքննության, առայժմ չկարողացանք պարզել:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՈ՞Ւ ՄԱՆԴԱՏԸ ՎԱՅՐ ԴՐԵՑ

Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանի հետ զրուցել ենք Անդրանիկ Թեւանյանի՝ մանդատը վայր դնելու, իրենց առաջիկա անելիքների եւ Նիկոլ Փաշինյանի երբեմնի գաղափարակիցը լինելու մասին:

-Պարոն Սուքիասյան, օրերս Անդրանիկ Թեւանյանը հայտարարեց, որ վայր է դնում ավագանու անդամի մանդատը, եւ խմբակցությունը Դուք եք ղեկավարելու: Ընտրություններից առաջ պարոն Թեւանյանը հայտարարում էր, որ գնում է ամբողջական իշխանական համակարգի փոփոխության օրակարգով, հանրահավաքներ էր հրավիրում, քաղաքացիներին հրավիրում էր, որպեսզի լինեն իշխանափոխության օրակարգում, սակայն վայր դրեց մանդատը: Ինչո՞վ էր պայմանավորված այս որոշումը: Եթե իսկապես նպատակը իշխանափոխությունն էր, ինչո՞ւ հետ կանգնեց:

-Եկեք չմոռանանք, որ դրանից առաջ Անդրանիկ Թեւանյանը հրաժարվել էր նաեւ Ազգային Ժողովի պատգամավորի մանդատից, եւ Ձեր ասածը իրականության հետ աղերս կունենար, եթե պատգամավորի մանդատից հրաժարվելով, ամբողջական իշխանափոխություն պահանջելով՝ ընտրություններին մասնակցելուց հետո Անդրանիկ Թեւանյանը գնար եւ դառնար ավագանի եւ սկսեր ավագանու իր գործունեությունը, այսինքն՝ իր կոչին՝ ամբողջական իշխանափոխության, քվեի տեսքով արձագանքեցին ավելի քան երեսունհինգ հազար երեւանցիներ, ինչը պատկառելի թիվ է, բայց, արի ու տես, որ քվեների այդ թիվը բավական չէր ամբողջական իշխանափոխություն իրականացնելու համար: Հիմա այդ մանդատը, որ տրվել էր «Մայր Հայաստան» դաշինքին, չի կարելի թողնել բախտի քմահաճույքին: Ամբողջական իշխանափոխության օրակարգը ավելի քան արդիական է «Մայր Հայաստան»-ի օրակարգում, որի վառ դրսեւորումն էր մի քանի օր առաջ Շենգավիթում «Մայր Հայաստան» շարժման գրասենյակի բացումը: Դա հակառակ է մեր քաղաքական մշակույթին. բոլորը ընտրություններից առաջ են բացում, մենք՝ ընտրություններից հետո: Նպատակ ունենք առաջին մեկ-երկու գրասենյակների հաջողելու դեպքում՝ արդեն ամբողջ Երեւանով, հետագայում արդեն ամբողջ Հայաստանով ծածկույթ ապահովել: Հետեւաբար, այն, ինչը որ հռչակվել է, ընտրության արդյունքներով չէ, որ պետք է պայմանավորել: Ընտրություններում մեր ցույց տված արդյունքները ցույց տվեցին, որ կա այդ հանրային պահանջը, եւ, այո՛, իշխանությունը իր արբանյակ ուժի հետ չկարողացավ 50+1 ձայն հավաքել: Սա մազից կախված քաղաքային իշխանություն է, ինչպես նաեւ փնթիությունը, որը դրսեւորվեց երդմնակալության արարողությունը կազմակերպելու ժամանակ: Եվ՛ Մարության Հայկի, եւ Սարգսյան Հրաչի երդմնակալության արարողության ժամանակ վարողը հայտնեց, որ ներկա է ավագանի, նիստը իրավազոր է... Այս պարագայում նման բան չկար: Մենք մտել ենք դատարան եւ լիահույս ենք, որ դատարանը անաչառ կգտնվի հատկապես, որ մենք Թալինում նախադեպ ունենք, հետեւաբար պետք է պարտադրի նորից ավագանու նիստ գումարել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Է ⇨ ՀՐԱՎԻՐԵԼ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը ֆեյսբուքյան իր էջում գրում է. «Որպես Հայաստան-Բելգիա բարեկամական խմբի անդամ՝ մի խումբ պատգամավորների հետ հանդիպում ունեցա Հայաստանում գտնվող Բելգիա-Հայաստան բարեկամական խմբի անդամների հետ՝ Մարկ Դեմեսմեկերի գլխավորությամբ:

Բելգիացի իմ գործընկերների ուշադրությունը հրավիրեցի հայկական երկրորդ հանրապետության ցավալի կորստից հետո բռնի տեղահանված 120000 արցախահայության խնդիրներին, Հայաստանի անվտանգային մարտահրավերներին:

Ընդգծեցի, որ մինչ մեր հայրենակիցները միջազգային ամուր երաշխիքների առկայության պայմաններում կվերադառնան Արցախ, խնդիր կա պահպանելու հայկական պատմամշակութային հուշարձանները, գերեզմանները եւ արցախահայերի սեփականությունը: Մարդիկ դռները փակել եւ դուրս են եկել՝ իրենց հետ գրեթե ոչինչ չբերելով:

Ներկայացրի Բաքվում մինչ օրս պահվող հայ ռազմագերիների, գերեվարված քաղաքացիական անձանց շուտափույթ վերադարձի, անհետ կորածների որոնողական աշխատանքների վերսկսման անհրաժեշտությունը՝որպես միջազգային իրավունքի անխախտելի պահանջ:

«Մեր տարածաշրջանում միջազգային իրավունքը չի գործում, քանի որ անգամ Արդարադատության միջազգային դատարանի կայացրած որոշումները մնացել են անկատար Ադրբեջանի կողմից. պետք է միջազգային հանրությունը այս ուղղությամբ ջանքեր գործադրի»,- ամփոփեցի խոսքս՝ շնորհակալություն հայտնելով բարեկամական խմբի անդամներին իրենց աշխատանքի համար»:

ՉԻ ԽՈՒՍԱՓԵԼ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

«Հայաստանը բազմիցս հայտարարել է, որ պատրաստ է Ադրբեջանի հետ բանակցությունների». ինչպես տեղեկացնում է «Ժողովուրդ» օրաթերթը, լրագրողների հետ ճեպազրույցում այս մասին ասաց Ազգային Ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը՝ պատասխանելով հարցին, թե Ադրբեջանը Հայաստանին կոչ է արել անցնել ուղիղ բանակցությունների, արդյոք պատրաստ է Երեւանը ուղիղ բանակցությունների:

«Հայաստանը բազմիցս հայտարարել է, որ պատրաստ է բանակցությունների: Ավելին՝ փոխանակվում են խաղաղության պայմանագրերի տարբեր նախագծեր: Դրա մասին մեր Արտաքին գործերի նախարարությունն անընդհատ մեկնաբանություններ է տալիս նորություններ լինելու դեպքում: Եթե առաջարկներով փաստաթուղթ է ուղարկվում Երեւան, Երեւանից առաջարկներով փոխանցվում Բաքու, դա ի՞նչ է, եթե ոչ բանակցություն»,- ասաց Արշակյանը: ԱԺ նախագահի տեղակալն ընդգծեց՝ Հայաստանը բանակցություններից երբեք չի խուսափել եւ մասնակցել է բանակցություններին այն հարթակներում, որոնք արդյունավետ է համարել:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՆԱԽԱԳԻԾԸ

ArmLur.am-ը գրել էր, որ ՔՊ-ականները եւ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը երեկ փակ քննարկում են ունեցել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իշխանական պատգամավորները եւ նախարարը քննարկել են «Առողջապահության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծը, որի վերաբերյալ առաջիկայում հանրային լսումներ կիրականացվեն, եւ այն կմտնի ԱԺ նիստերի օրակարգ: Մեր տեղեկություններով՝ Ավանեսյանի եւ ՔՊ-ականների քննարկումը բավականին ջերմ ու գործնական մթնոլորտում է անցել: Անահիտ Ավանեսյանը ներկայացրել է իր գլխավորած նախարարության հեղինակած նախագիծը, այնուհետեւ պատասխանել է պատգամավորների հարցերին, որոնք հիմնականում դրական կարծիքներ են հնչեցրել նախագծի մասին: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Անահիտ Ավանեսյանի կուսակցական ակտիվությունն իր արդյունքը տվել է:

ՄԱՆԴԱՏՆԵՐԸ ՓՈԽԱՆՑՎԵՑԻՆ

Երեւանի ավագանու մի շարք անդամների լիազորությունները վաղաժամ դադարեցվել են, նրանց մանդատները կհանձնվեն ցուցակով հաջորդ թեկնածուներին:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին Երեւանի ավագանու 1-ին նստաշրջանի 2-րդ նիստի ժամանակ հայտնեց քաղաքապետ Տիգրան Ավինյանը՝ նշելով, որ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմումներ են ներկայացրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Երեւան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երեւան քաղաքի ավագանու անդամ Լեւոն Հովհաննիսյանը, «Հանրապետություն» կուսակցության Երեւան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված՝ Երեւան քաղաքի ավագանու անդամներ Ռոմիկ Մխիթարյանը եւ Տիգրան Տեր-Մարգարյանը, «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի Երեւան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված՝ Երեւան քաղաքի ավագանու անդամներ Թաթուլ Պետրոսյանը եւ Անդրանիկ Թեւանյանը:

«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացված արձանագրությունների համաձայն՝ լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամների մանդատները տրվել են ՔՊ ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Միքայել Խաչատրյանին, «Հանրապետություն» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Արմեն Մկրտչյանին, Հարություն Մանվելյանին, «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ Աննա Ավետիսյանին եւ Արշակ Սարգսյանին»,- նշեց Ավինյանը:

ԱԼԻԵՎԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻՆ

«Մարդկության գաղութատիրական պատմության արյունալի հանցագործությունների մեծ մասը կատարել է Ֆրանսիան»,- ասվել է նոյեմբերի 21-ին «Ապագաղութացում. կանանց ուժեղացում եւ զարգացում» թեմայով միջազգային համաժողովի մասնակիցներին ուղղված Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիեւի ուղերձում (ինչպես հաղորդում է Trend-ը):

«Ֆրանսիա, որը օկուպացրել է Աֆրիկայի, Հարավարեւելյան Ասիայի, Խաղաղ օվկիանոսի, Ատլանտյան եւ Հնդկական օվկիանոսների, Լատինական Ամերիկայի տասնյակ երկրներ, երկար տարիներ թալանել է նրանց հարստությունը եւ ստրկացրել նրանց ժողովրդին, այդ տարածքներում բազմաթիվ ռազմական հանցագործություններ եւ մարդկության դեմ հանցագործություններ է կատարել: Ջինված ուժերը ցեղասպանության են ենթարկել հարյուր հազարավոր խաղաղ բնակիչների իրենց ազգային պատկանելիության եւ կրոնական պատկանելիության պատճառով: Ստրուկների առեւտուրը, որով ակտիվորեն զբաղվում էր Ֆրանսիան, մարդկության պատմության ամենախայտառակ էջերից մեկն է: Միլիոնավոր աֆրիկացիներ դարձել են ֆրանսիական ստրկատիրական քաղաքականության զոհերը:

Ես կոնկրետ փաստերով բազմիցս թվարկել եմ Ֆրանսիայի կողմից իր օկուպացված երկրներում մարդկության դեմ ուղղված բազմաթիվ հանցագործությունները եւ վայրագությունները: Մի քանի միլիոն անմեղ մարդիկ, այդ թվում՝ կանայք եւ երեխաներ, սպանվել են Ֆրանսիայի կողմից Ալժիրում, Մարոկկոյում, Թունիսում, Մալիում, Ջիբութիում, Նիգերիայում, Չադում, Սենեգալում, Բենինում, Փղոսկրի Ափ, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Գաբոն, Տոգո, Կամերուն, Վիետնամ Միությունում: Ֆրանսիան նաեւ մեծապես պատասխանատու է 1994 թվականին Ռուանդայում ավելի քան 800,000 թութսիների սպանության համար», - նշել է նա:

Ապա նա խոսել է Ֆրանսիայի ներկայիս քաղաքականության մասին եւ ասել, որ այդ երկիրը խախտում է կայունությունը տարածաշրջանում: «Ֆրանսիան վարում է ռազմատենչ քաղաքականություն՝ զինելով Հայաստանին, խրախուսելով ռեւանշիստական ուժերին Հայաստանում եւ հող է նախապատրաստում մեր տարածաշրջանում նոր պատերազմներ սանձազերծելու համար: Միեւնույն ժամանակ, Ֆրանսիան չարաշահում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամի կարգավիճակը իր կողմնակալ քաղաքականությունը վարելու համար, աշխարհաքաղաքական ինտրիգներով է զբաղվում տարբեր տարածաշրջաններում եւ փորձում է օգտագործել արեւմտյան կազմակերպություններին՝ որպես պետությունների դեմ ճնշում գործադրելու միջոց», - նշել է նա:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԱՐՑԱԽԻ ՇՏԱԲԸ ՉԻ՞ ԳՈՐԾՈՒՄ

Սեպտեմբերի 19-ից՝ արցախյան վերջին մարտական գործողություններից հետո, գրեթե 100 հազար եւ ավելի արցախցիներ բռնի տեղահանվեցին Հայաստան:

Տեղահանվածներից շատերը Հայաստանում ստացան աջակցություն՝ պետության կողմից հատկացված ֆինանսական միջոցների տեսքով: Արցախը կորցնելու հետ մեկտեղ կորցրեցինք նաեւ պատմական եւ մշակութային այն արժեքները, որոնք հայ լինելու մեր ԴՆԹ-ն էին եւ Արցախում հայերի լինելու ապացույցը, հետքը:

Արցախցիների՝ Հայաստան գալուց հետո այստեղ նրանց օգնության համար ուղղորդում էին Արցախի տեղեկատվական շտաբ, որը գտնվում էր Երեւանում՝ Աբովյան 9 հասցեում:

«Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր. «Հերթեր՝ Արցախի օպերատիվ շտաբի դիմաց. արցախցիների դիմումները մնում են օդում կախված»: Օդում կախված դիմումները այդպես էլ պատասխան չստացան, քանի որ օրերս վերջնականապես փակվեց Արցախի տեղեկատվական շտաբը: Արցախցիները պատմում են, որ դիմումներ են ներկայացնում սոցիալական աջակցություն տանալու, կացարանի կամ այլ հարցերով, բայց իրենց դիմումներն այդպես էլ չեն ընդունում: Դրա փոխարեն՝ ուղորդում են մի կառույցից մյուսը, պատճառաբանում են, թե իրենց հերթը չի հասել, կամ էլ այդ հարցն իրենց տիրույթում չէ:

Շենքի պատին փակցված ցուցանակը, որը ուղղորդում էր քաղաքացիներին, թե որտեղ է գտնվում Արցախի տեղեկատվական շտաբը, հեռացվել է, եւ փակցված մնացել է միայն Արցախի դրոշը: Այժմ արցախցիների եւ Արցախի կառավարության միջեւ կապը պահվում է միայն Հայաստանում Արցախի ներկայացուցչության միջոցով, որը գտնվում է Նաիրի Զարյան 17ա հասցեում:

«Ժողովուրդ» օրաթերթը կապվեց Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի «Արդարություն» խմբակցության պատգամավոր Դավիթ Գալստյանի եւ Մետաքսե Հակոբյան հետ, նրանք տեղեկություն չունեին շտաբի փակման վերաբերյալ. «Ես ձեզնից եմ տեղեկանում, որ Արցախի շտաբը այլեւս չի գործում»,- ասաց Մետաքսե Հակոբյանը:

Հավելենք նաեւ, որ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ԱԺ քննիչ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը հրավեր է ուղարկել նաեւ Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանին. վերջինս համաձայնել է:

Սամվել Շահրամանյանին քննիչ հանձնաժողով հրավիրել են ոչ թե որպես Արցախի նախագահի, այլ որպես 2018-2020 թվականների ընթացքում ԱԱԾ նախկին տնօրենի:

Հիշեցնենք նաեւ, որ վերջերս Արցախի ներկայացուցչության դիմաց լարված իրավիճակ է եղել, որի ընթացքում արցախցիները պահանջել էին ԱՀ նախագահ Սամվել Շահրամանյանի հրաժարականը: Սամվել Շահրամանյանն էլ իր հերթին հայտարարել էր. «Արցախի Հանրապետությունը լուծարված չէ, ոչ մի փաստաթղթով չի կարող լուծարվել ժողովրդի կողմից ստեղծված հանրապետությունը: Սրան ես պատասխանը տալու եմ հանրային ձեւով, առաջիկայում ես այս բոլոր հարցերին անդրադառնալու եմ եւ այդ փաստաթղթին, եւ այն փաստաթղթին, որն ընդունվել է ռազմական գործողությունները կանգնեցնելու նպատակով:

Որեւէ մեկի մոտ թող կասկած չառաջանա, որ եթե մենք իմանայինք, որ մենք կարող ենք հաղթել այդ ռազմական գործողություններում, մինչեւ վերջ կգնայինք:

Մենք խնայել ենք մեր տղերքին, քաղաքացիական բնակչության կյանքը», - պնդեց նա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՄԵԿՆԵՆ ՀՌՈՄ

ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը եւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանը դեկտեմբերի 3-6-ը կմեկնեն գործուղման Իտալիա:

«Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ-ից տեղեկացավ, որ Ռուբեն Ռուբինյանը եւ Արմեն Ռուստամյանը Հռոմում միասին կմասնակցեն ԵԽԽՎ Մոնիթորինգի հանձնաժողովի նիստին:

Նրանց գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը, կկատարվեն պետբյուջեի հաշվին:

ԳՆԴԱԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՇՏՈՒՄ

Տարածաշրջանում ձեւավորված նոր իրողությունների շրջանակներում մենք որեւէ խոչընդոտ չենք տեսնում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրման համար:

Ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն, լրագրողներին ասել է Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը:

Նա նշել է, որ, բառախաղերի փոխարեն, շատ կարեւոր է, որ հայկական կողմը կոնկրետ քայլ անի եւ նստի բանակցությունների սեղանի շուրջ:

«Մենք ասում ենք, որ, երրորդ կողմերին օրակարգ մտցնելու փոխարեն, մենք պետք է առաջ տանենք խաղաղ համաձայնագրի շուրջ բանակցությունները: Գնդակը Հայաստանի դաշտում է»,- նշել է Հիքմեթ Հաջիեւը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴԴԵՄ ԱՄՆ-Ի

Ադրբեջանի խորհրդարանում ստեղծված հանձնաժողովը հայտարարություն է պատրաստել ԱՄՆ-ի դեմ:

Միլի մեջլիսի նիստում խոսնակ Սահիբա Գաֆարովայի առաջարկով հայտարարության ընդունման համար ստեղծվել է հանձնաժողով: Այն գլխավորել է Ջիյաֆեթ Ասքերովը, հանձնաժողովի անդամներ են դարձել Սամեդ Սեիդովը, Թուրալ Գյանջալիեւը, Հուդրաթ Հասանղուլիեւը, Քյամիլա Ալիեւան եւ Թամամ Ջաֆարովան: Ադրբեջանի խորհրդարանի ընդունած հայտարարությունում նշված է. «Միլի մեջլիսը վճռականորեն մերժում է ԱՄՆ Սենատում ընդունված ակտը՝ ընդդեմ Ադրբեջանի, եւ այն համարում է լուրջ հարված երկու երկրների միջեւ հարաբերություններին: Դա լուրջ խոչընդոտ է ստեղծում տարածաշրջանում խաղաղության հաստատման ջանքերի համար: ԱՄՆ Սենատի ընդունած ակտը երկակի չափորոշիչների եւ ընտրովի վերաբերմունքի վառ օրինակ է: Երբ Հայաստանն ընդլայնեց օկուպացիան Ադրբեջանի դեմ, կատարվեցին Խոջալուի ցեղասպանությունն ու ադրբեջանցի բնակչության զանգվածային սպանությունները: Որպես ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամ՝ չփորձեցիք կանխել այդ գործողությունները, հակառակը, ընդունեցիք 907-րդ լրացումը Ադրբեջանի դեմ: Արդյունքում ԱՄՆ ֆինանսական աջակցությունն օգնեց Հայաստանին օկուպացնել ադրբեջանական հողերը:

Ամերիկայի Միացյալ Նահանգներն աջակցել է անջատողական ռեժիմին, որն ստեղծվել էր Ադրբեջանի տարածքում: ԱՄՆ ներկա գործողությունները, որպես միջնորդի, հանգեցրել են նրա հեղինակության կորստին Ադրբեջանում: ԱՄՆ արտաքին քաղաքականությունը վերջին տարիներին լիակատար ձախողման է ենթարկվել: Այս առումով պետք է հատկապես նշել քաղաքականությունը Մերձավոր Արեւելքում եւ Աֆղանստանում: Ադրբեջանի Միլի մեջլիսը մեկ անգամ եւս հայտարարում է, որ Ադրբեջանը, հենվելով միջազգային իրավունքի նորմերի եւ սկզբունքների վրա, միշտ վճռական կարձագանքի բոլոր բացասական քայլերին»:

Քննարկումներից հետո հայտարարությունը դրվեց քվեարկության եւ ընդունվեց:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

«ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂԵՐՆ» ՈՒ ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ ոստիկանության Կոմիտեի Երեւան քաղաքի ոստիկանության վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ոստիկանության բաժնում գտնվող հրեական վարույթի շրջանակներում իրականացված ոստիկանական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են հրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող երկու անձանց եւ նրանց կողմնակիցների կողմից Երեւան քաղաքի Դավիթ Բեկ փողոցին հարակից տարածքում կատարված խուլիգանության դեպքի մի շարք հանգամանքներ:

ՔԿ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ, մասնավորապես, Ոստիկանությունից հաղորդում է ստացվել այն մասին, որ նոյեմբերի 17-ին, քաղաքացու ահազանգի հիման վրա, Երեւան քաղաքի Դավիթ Բեկ փողոց ժամանած Ոստիկանության օպերատիվ խումբը պարզել է, որ մի խումբ անձինք, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ, վիճաբանել եւ հարվածներ են հասցրել միմյանց: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում նույն օրվա ընթացքում, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, ձերբակալվել եւ վարույթն իրականացնող մարմին են ներկայացվել Երեւան քաղաքում բնակվող 12 անձինք:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով, 324-րդ հոդվածի 1-ին մասով եւ 324-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Ա. Մ.-ն 2023թ. նոյեմբերի 17-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, Երեւան քաղաքի Դավիթ Բեկ փողոցի հարակից տարածքում մի խումբ անձանց հետ վիճաբանել է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող մեկ այլ անձի՝Վ.Ա.-ի եւ վերջինիս՝ինքնությունները դեռեւս չպարզված մի խումբ կողմնակիցների հետ: Վիճաբանության ընթացքում կողմերը փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց՝ հասարակության նկատմամբ ցուցաբերելով բացահայտ անհարգալից վերաբերմունք, ինչպես նաեւ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ՝հայհոյանքներ են հնչեցրել միմյանց հասցեին, խախտել մարդկանց անդորրը եւ խոչընդոտել տրանսպորտային միջոցների բնականոն երթեւեկությունը:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝վարույթն իրականացնող քննիչի կողմից միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին Ա. Մ.-ի եւ մյուս 11 անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը բավարարվել է: Վերջիններիս մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (խմբի կազմում խուլիգանություն կատարելը):

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԳՈՒՄԱՐ Է ՀԱՓՇՏԱԿԵԼ

Նոյեմբերի 18-ին ոստիկանության Էրեբունու բաժնում ՍՊ ընկերություններից մեկի տնօրենը խարդախության վերաբերյալ հաղորդում էր տվել: Նա հայտնել էր, որ մոտ 2 միլիոն 360 հազար դրամի ապրանք է առաքել ոմն Միքայելի՝ նույն օրը գումարը վճարելու պայմանով, սակայն նա, ստանալով ապրանքը, չի վճարել եւ խաբեությամբ հափշտակել է այն:

Ոստիկանությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ խարդախության փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախույզները ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզել են, որ նշված խարդախությունը կատարել է երեւանցի 54-ամյա տղամարդը, որը ներկայացել էր այլ անունով: Նոյեմբերի 20-ին նա Արշակունյաց պողոտայի հասցեներից մեկի մոտ հայտնաբերվել, ձերբակալվել եւ տարվել է Էրեբունու բաժին:

Խաբեությամբ հափշտակված ապրանքի մի մասը հայտնաբերվել է, ձեռնարկվում են միջոցառումներ՝ մյուս մասը հայտնաբերելու ուղղությամբ:

Կազմված փաստաթղթերը փոխանցվել են քննչական բաժին:

Նախաքննությունը շարունակվում է:

ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ՝ ՉՈՐԲՈՐԴ ԳՅՈՒՂՈՒՄ

Հաղթանակ թաղամասի կրակոցներից անցել է 10 օր, եւ որեւէ մեկին իրավապահները չեն կարողանում ձերբակալել, դեռ ավելին՝ ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները փնտրում են 10-ից ավելի անձի:

Ի դեպ, մարտաֆիլմ հիշեցնող կրակոցներն ու ծեծկռտուքը, ըստ նախնական վարկածի, եղել է կնոջը սիրահետելու թեմայի շուրջ:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 9-ին կրակոցներ էին հնչել Երեւանում՝Չորրորդ գյուղի 10-րդ փողոցում: Դրան նախորդել էր վիճաբանություն, որը վերածվել էր ծեծկռտուքի, եւ հնչել էին կրակոցներ: Դեպքի վայրում ոստիկաններն ու քննիչները հայտնաբերել են ինքնաձիգից արձակված 10-ից ավել պարկուճներ, քարեր, փայտե մահակներ, կոտրված ավտոմեքենաներ եւ հանցագործության բացահայտման համար կարեւոր իրեր:

ՀՀ քննչական կոմիտեն եւս հայտնել էր, որ միջադեպի մասնակիցների ինքնությունները պարզված 8 անձանց նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, որոնցից 6-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի (Ֆիզիկական ներգործությունը) 2-րդ մասի 5-րդ կետով, 297-րդ հոդվածի (Խուլիգանությունը) 3-րդ մասով, իսկ 2-ին՝ վերոնշյալներից բացի, նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի (Հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը) 1-ին մասի հատկանիշներով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ԿԱՇԱՌՔ՝ ՊԱՐԵԿՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ 2023 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցներին կաշառք առաջարկելու եւ ապօրինի թմրամիջոց պահելու կասկածանքով վերջիններիս կողմից ձերբակալվել եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե է ներկայացվել Ա. Ս.-ն:

ՔԿ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ ըստ նախաքննությամբ ստացված տվյալների՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության երկու աշխատակիցներ 2023 թվականի նոյեմբերի 20-ին՝ Նուբարաշենի խճուղում ծառայություն իրականացնելիս, տեխնիկական զննության ժամկետն անցած լինելու պատճառով կանգնեցրել են Ա. Հ.-ի վարած «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան: Այդ ընթացքում նկատելով, որ ավտոմեքենայում գտնվող ուղեւորը՝ Ա. Ս.-ն, գրպանից հանել եւ նետել է կաթուցիչով թմրամիջոցը, պարեկային ծառայողները կանչել են իրենց երկու այլ ծառայակիցներին: Ա. Ս.-ն դեպքի վայր ժամանած պարեկային ծառայողներից մեկին առաջարկել է առանձին զրուցել, որի ընթացքում վերջիններիս եւ դեպքի վայրում գտնվող մյուս պարեկային ծառայողների կողմից իր օգտին ապօրինի անգործության, այն է՝ ենթադրյալ հանցանք կատարելու փաստը չարձանագրելու ու դեպքի վայրից բաց թողնելու համար առաջարկել է 20.000-ական ՀՀ դրամ կաշառք յուրաքանչյուրին:

Ա. Ս.-ն ձերբակալվել է՝ապօրինի թմրամիջոց պահելու, ինչպես նաեւ վարչական իրավախախտումները չարձանագրելու դիմաց պարեկային ծառայության 4 աշխատակիցներին ընդհանուր 80.000 ՀՀ դրամ կաշառք առաջարկելու հիմնավոր կասկածի առկայության հիմքով:

Նախաքննությունը շարունակվում է:

ԱՊՕՐԻՆԻ ՌԱԶՄԱՄԹԵՐՔ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝դատախազը 2023 թվականի նոյեմբերի 20-ին հաստատել է Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդի անդամ, ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Վարդան Այվազյանի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են Գլխավոր դատախազությունից՝հիշեցնելով, որ ԱԱԾ-ի քննչական գլխավոր վարչությունում քննված քրեական վարույթով պարզվել էր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդի անդամ, ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Վ.Ա.-ն ապօրինի կերպով ձեռք է բերել եւ իր փաստացի բնակության վայրում պահել ռազմամթերք հանդիսացող, գործարանային արտադրության «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգերից, «ՐՊԿ» տեսակի ձեռքի գնդացիրներից եւ համապատասխան տրամաչափի ակոսափող այլ զենքերից կրակելու համար նախատեսված 12 հատ 7,62 մմ (7,62*39) տրամաչափի, «ՍՎԴ» տեսակի նշանառու հրացաններից, «ՊԿ» տեսակի գնդացիրներից եւ համապատասխան տրամաչափի ակոսափող այլ զենքերից կրակելու համար նախատեսված 2 հատ 7,62 մմ (7,62*54R) տրամաչափի մարտական փամփուշտներ, ինչպես նաեւ «MP-446 (Viking)», «Glock» տեսակի ատրճանակներից եւ համապատասխան տրամաչափի ակոսափող այլ զենքերից կրակելու համար նախատեսված 34 հատ 9 մմ (9*19) տրամաչափի սպորտային-վարժանքային փամփուշտներ:

Վ.Ա.-ի նկատմամբ հարուցված էր հանրային քրեական հետապնդում՝18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով (ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից եւ դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը):

Վ.Ա.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառված բացակայելու արգելքը:

● Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 20-ից 21-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 70 դեպք, որոնցից 10-ը՝նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽԱԽՏԵԼ Է ԺԱՄԿԵՏԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, հոկտեմբերի 25-ին հանդիպելով մարզում պետբյուջեի միջոցներով, ինչպես նաեւ սուբվենցիոն ծրագրերով աշխատանքներ իրականացնող շինարարական կազմակերպությունների ղեկավարների հետ, նրանց հորդորել է հնարավորինս պահպանել պայմանագրերի ժամկետները, ինչպես նաեւ ուշադրության կենտրոնում պահել շինաշխատանքների որակը: Մարզպետին «Ժողովուրդ» օրաթերթը հարցրել է, թե մարզում պետբյուջեի միջոցներով, ինչպես նաեւ սուբվենցիոն ծրագրերով իրականացվող որ պայմանագրերի ժամկետներն են խախտվել, որ կազմակերպություններն են իրականացնում այդ ծրագրերը, ծրագրի ավարտի ժամկետը խախտելու համար օրենքով ինչ պատասխանատվություն է սահմանված:

Մարզպետը պատասխանել է. «ՀՀ Տավուշի մարզում պետբյուջեի միջոցներով, ինչպես նաեւ սուբվենցիոն ծրագրերով աշխատանքներ իրականացնող շինարարական կազմակերպությունների կողմից խախտվել է Բագրատաշենի մշակույթի տան վերանորոգման աշխատանքների կատարման ժամկետը «Պողոսյանշին» ՍՊԸ կողմից, սակայն դիտողությունից հետո շինարարը արդեն իսկ վերացրել է բացթողումները: Տույժ պատվիրատու հանդիսացող Նոյեմբերյան համայնքի կողմից չի կիրառվել»:

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԴԺԳՈՀՈՒՄ ԵՆ

Բերդ համայնքի սննդի օբյեկտների աշխատողները «Ժողովուրդ» օրաթերթին դժգոհել են, որ իրենք ստիպված են 6 ամիսը մեկ թարմացնել իրենց սանիտարական գրքույկները, դրա համար նրանք հարկադրված են սահմանագոտիով մոտ 70 կմ ճանապարհ անցնել եւ Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքում լաբորատոր ուսումնասիրության համար նմուշներ ներկայացնել: Սննդի օբյեկտների աշխատողներն ասացին, որ նախկինում իրենց նման պահանջ չէր ներկայացվում. շուրջ մեկ տարի է, որ իրենք ստիպված են ժամանակ եւ գումարներ ծախսելով Տավուշի մարզկենտրոն մեկնել: Տարիներ առաջ մարզի Նոյեմբերյանի, Բերդի եւ Դիլիջանի տարածաշրջանների «սանէպիդկայանները» կառուցվածքային փոփոխությունների ենթարկվեցին, դրանց գործառույթները եւ աշխատակիցների թիվը կրճատվեցին, այդ աշխատանքային գործառույթների մեծ մասը փոխանցվեց Հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության Տավուշի մարզային տարածքային կենտրոնին: Վերջին ժամանակաշրջանում սննդի անվտանգության պետական տեսչությունը հետամուտ է օրենքի կիրարկմանը, որպեսզի Տավուշի մարզի տարածաշրջանների սննդի օբյեկտների աշխատողները Իջեւանի առողջության առաջնային պահպանման կենտրոնում բակտերոլոգիական հետազոտության համար նմուշներ հանձնեն: Դա արվում է այն նպատակով, որ սննդի օբյեկտների աշխատողների մեջ ինֆեկցիոն հիվանդները բացառվեն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱՁԵՌՆԵԼ ԵՆ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆԵՐ ԵՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

«Գորիս բարեկարգում» ՀՈԱԿ-ի եւ ամերիկահայ երիտասարդների նախաձեռնությամբ՝ Գորիսում արցախցիների համար տներ են կառուցում:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասել է Գորիսի համայնքի ղեկավարի տեղակալ Իրինա Յոլյանը:

«Համայնքի ղեկավարի հանձնարարականով՝ քարտեզագրվել են համայնքային ենթակայության շինությունները, անբնակ տները, որոնք այս պահին լքված են, բայց ենթակա են վերակառուցման: Համագործակցելով ամերիկահայ երիտասարդ բարեկամների հետ՝ փորձում ենք այդ տները վերակառուցել եւ տրամադրել Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին: Այս պահին 2 տան շինարարական աշխատանքներ են ընթանում, որոնց ավարտը նախատեսված է մինչեւ գարուն:

Թիրախային ընտրել ենք բազմազավակ եւ առավել խոցելի պայմաններում գտնվող ընտանիքներին»,- մանրամասնում է Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ Իրինա Յոլյանը:

Նրա խոսքով՝ շինարարական աշխատանքներն իրականացվում են Գորիս համայնքի կողմից, իսկ ներսի բարեկարգման աշխատանքների ծախսերը հոգում են ամերիկահայ բարերարները:

Շինարարական աշխատանքներին այս պահին անմիջական մասնակցում են նաեւ երիտասարդ բարերարներից Գարեն Բաբեխանին եւ Զարեհ Թումանյանը:

«Այլ մարդկանց հետ քննարկումներ ենք կատարում նաեւ երեք տան շուրջ: Նախատեսված է եւս 2 շենք վերակառուցել, որը հնարավորություն կտա տեղավորելու շուրջ 50 ընտանիքի, եւ քանի որ Գորիս համայնքն ունի փորձ սոցիալական շենքեր կառուցելու, մտածում ենք նաեւ հետագայում կառուցել սոցիալական շենքեր՝ բռնի տեղահանված արցախցիների համար»,- նշում է Յոլյանը:

Համայնքի ղեկավարի տեղակալի խոսքով՝ գորիսեցիների ջանքերով Բարձրավանում երկու բազմազավակ ընտանիքի անվճար բնակարան է հատկացվել: Վերջիններիս տրամադրվել են հողատարածք եւ ջերմոցներ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար:

«2023թ. սեպտեմբերյան վերջին իրադարձություններից հետո Գորիսում հաստատվել է շուրջ 2000 բռնի տեղահանված արցախցի: Շատերը բնակվում են վարձով, մի մասը՝ բարեկամի տանը, իսկ մի մասն էլ՝ հյուրանոցներում, որոնք փորձում են գտնել վարձով բնակարաններ, քանի որ հյուրանոցների միջոցները եւս սպառվում են»,- ասել է Իրինա Յոլյանը:

ՍԵՎ ՈՒՐԲԱԹ

ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻՑ

Սեւ ուրբաթը տեղի է ունենում ԱՄՆ-ում Գոհաբանության տոնի ուրբաթ օրը: Դրանից սկսվում է ավանդական Ամանորի զեղչերի տոնավաճառը: Սեւ ուրբաթ կազմակերպելու ավանդույթը հաստատվել է դեռեւս 19-րդ դարում, իսկ տերմինը՝ «Սեւ ուրբաթ», հայտնվել է 1966 թվականին եւ օգտագործվում էր հիմնականում ԱՄՆ-ի արեւելյան մասում:

Ըստ ավանդույթի՝ Սեւ ուրբաթին հաջորդող իրադարձությունը Կիբեռ երկուշաբթին է, որի ընթացքում IT-ընկերությունների մեծ մասը զեղչեր են առաջարկում, իսկ վերջերս զեղչերը սկսել են տարածվել նաեւ այլ ոլորտների վրա: Հայաստանում նախորդ տարի սահմանված պահանջները խախտելու համար Սեւ ուրբաթի եւ Ամանորի զեղչերի ժամանակ Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը վարույթ է հարուցել 35 տնտեսվարողների նկատմամբ, որոնք տուգանվել են 100 մլն դրամի չափով:

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ Տիգրան Մարկոսյանը օրեր առաջ հայտնել էր. «Օրենսդրորեն հստակ պահանջ կոնկրետ առեւտրի օբեկտում հայտարարված առավելագույն զեղչի չափով ակցիայի մեկնարկին պետք է լինի մեկ հինգերորդի չափով այդ հայտարարությանը համապատասխան զեղչ»,-ասաց Մարկոսյանը: Նա հավելել էր նաեւ, որ փորձով է ապացուցված, որ մենք ակցիաների, այդ թվում՝ զեղչերի իրականացման ոլորտում ունենք բազում խնդիրներ, մասնավորապես՝ երբ որեւէ գնային փոփոխություն տեղի չէր ունենում զեղչի ժամանակ, շատ դեպքերում արհեստականորեն գինը բարձրացնում էին եւ այլն: Այս խնդիրները հավաքագրվել են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից:

Արդյունքում որոշել են խնդիրները լուծել՝ օրենսդրական մակարդակում կարգավորումներ նախաձեռնելով: Հանձնաժողովի մշակած «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 31-ից: «Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով խոսել է մանր եւ միջին բիզնեսի իրավապաշտպան Սամսոն Գրիգորյանի հետ, որը մեզ հետ զրույցում նշեց, որ համամիտ է այն որոշման հետ, որը կայացրել է ՏՄՊՊՀ-ն, եւ հավելեց, որ Սեւ ուրբաթն Հայաստանում «քնած փողերը» արթնացնում է:

Հիշեցնենք նաեւ, որ այս տարի Սեւ ուրբաթ Հայաստանում կանցկացվի նոյեմբերի 24-ին:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏՆԵԼ Է

ՕՆԼԱՅՆ ՇՈՒԿԱՆ ՈՒ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

Եթե շուկաների կարգավորման մասին օրինագիծն ընդունվի, օնլայն առեւտրով զբաղվող կայքերը ստիպված կլինեն գալիք տարվա համար ավելացնել վաճառողների եւ միջնորդների միջնորդավճարները, ինչը նույնպես կազդի ապրանքների ինքնարժեքի վրա. այս մասին Հանրային պալատում օրինագծի քննարկման ժամանակ ասել է Ozon-ի գործադիր տնօրենի տեղակալ Ալեքսեյ Մինաեւը. գրում է ՐԲԿ-ն:

Ռիսկերի մասին զգուշացրել են նաեւ Wildberries-ի, Yandex.Market-ի, AliExpress-ի, ինչպես նաեւ ապրանքների արտադրողների ու մատակարարների ներկայացուցիչները: Նրանց ամենամեծ մտահոգությունը պայմանագրերի պայմանները տարին մեկից ավելի անգամ փոխելն է:

«Ոչ մի բիզնես չի կարող գործել տարին մեկ անգամ գներ ֆիքսելով: Բոլորս էլ գիտենք, թե ինչ արդյունք է տալիս, երբ գները սահմանափակվում են, եւ դրվում են դրանք փոխելու արգելքներ: Բոլոր շուկաների առաջին արձագանքը կլինի միանգամից մեկ տարվա համար ուռճացված սակագներ սահմանելը»,- պարզաբանել է Մինաեւը:

Yandex E-Commerce Services-ի պետական մարմինների հետ փոխգործակցության փոխտնօրեն Տատյանա Չիբեզովան նշել է, որ վաճառողներին եւ առեւտրի կետերի սեփականատերերին տուգանելու արգելքը, ինչպես նաեւ անձնական հաշիվների արգելափակումը կարող է հանգեցնել շուկայում կեղծիքների հայտնվելուն: Նշենք, որ նոր օրենքը Պետդումա է ներկայացվել 2023 թվականի սեպտեմբերի 25-ին: Խորհրդարանականները նշել են, որ շուկաների սեփականատերերից պետք է պահանջվի կայքում հրապարակել բաց տվյալներ՝ պայմանների վերաբերյալ:

Գործարքի պարամետրերը կարող են փոփոխվել, բայց ոչ ավելի, քան տարին մեկ անգամ: Կողմերը պետք է տեղեկացնեն պայմանագրի դրույթները փոխելու իրենց ցանկության մասին պայմանագրի ժամկետի ավարտից առնվազն 30 օրացուցային օր առաջ: Պատգամավորները նաեւ առաջարկել են արգելել շուկայի սեփականատերերին սահմանափակել մուտքը վաճառողների անձնական հաշիվներ:

Հավելենք նաեւ, որ այս պահին Wildberries-ում տեխնիկական խափանումներ են ինչպես բջջային հավելվածում, այնպես էլ վեբ տարբերակում. հայտնում է «ՌԻԱ Նովոստի»-ի թղթակիցը:

Երբ փորձում եք որեւէ ապրանք գտնել, հայտնվում է «Ոչինչ չի գտնվել: Մենք ունենք 80 միլիոն ապրանք, բայց դրանցից ոչ մեկը չի համապատասխանում այս պահանջին» գրությունը:

Բացի այդ, օգտատերերը նաեւ դժգոհում են, որ արդեն իսկ զամբյուղում ավելացված ապրանքներն անհասանելի են դարձել: Wildberries-ից «ՌԻԱ Նովոստի»-ին ասել են, որ իրենք տեղում տեխնիկական խափանում են հայտնաբերել եւ աշխատում են ծառայության արագ վերականգնման ուղղությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ Է

ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել էր ցանկ, թե ովքեր են այն ՔՊ-ականները, որոնք հեղափոխությունից հետո տան տեր են դարձել: Նրանցից մեկն էլ Գայանե Եղիազարյանն է: Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գայանե Եղիազարյանը քաղաքական դաշտ էր եկել 2018 թվականի հեղափոխությունից հետո: 2018 թվականին «Իմ քայլը» խմբակցության համամասնական ցուցակով Եղիազարյանը ընտրվել է Երեւանի ավագանու անդամ: 2022 թվականի մայիսին Ազգային Ժողովի պատգամավոր Անուշ Բեղլոյանի՝ մանդատը վայր դնելուց հետո նրան փոխարինեց Գայանե Եղիազարյանը:

Հենց այդ տարի, երբ պատգամավորի եկամուտները աճեցին, Եղիազարյանը Երեւան քաղաքում բաժնային սեփականության իրավունքով բազմաբնակարան շենքում բնակարան գնեց: Բնակարանը ձեռք է բերել 36 մլն դրամով, իսկ գործարքի մյուս կողմը եղել է Երեւանի քաղաքապետարանը:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 530 հազար դրամ, էլեկտրոնային հաշիվները եւ կրիպտոարժույթները կազմել են 5 հազար դրամ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 2 մլն դրամ: Հաշվետու տարվա եկամուտները ընդհանուր հաշվարկով ներկայացված է 5 մլ 720 հազար դրամ, որից 5 մլն 27 հազարը Ազգային ժողովից ստացած աշխատանքի վարձատրությունն է: Եղիազարյանը եկամուտ է ստացել նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից 522 հազար դրամ, իսկ 170 հազարը վարկ է «Յունիբանկ»-ից եւ «ՀայԷկոնոմբանկ»-ից: Նրա ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 240 հազար դրամ: Գայանե Եղիազարյանի հետ համատեղ բնակվող Տիգրան Խիդիրյանը հայտարարագիր չի ներկայացրել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Team

ԳՐԱՎԻՉ ԱՌԱՋԱՐԿ՝ ՎԱՐՈՐԴՆԵՐԻՆ

Team Telecom Armenia-ն եւ Visa-ն գրավիչ առաջարկ են ներկայացնում էլեկտրական մեքենաների վարորդների համար. Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայաններում վճարումը Visa քարտով կատարելիս հաճախորդից կգանձվի գումարի 50%, իսկ մնացած կեսը կհատուցվի Visa-ի կողմից:

Team Energy կայանների արագ եւ գերարագ AC ու DC լիցքավորիչները նախատեսված են բոլոր տեսակի էլեկտրական մեքենաների լիցքավորման համար: Դրանք տեղադրված են Երեւանում, մարզերում, ինչպես նաեւ հիմնական եւ միջպետական նշանակություն ունեցող ճանապարհներին: Գերարագ լիցքավորման DC կայանները ապահովում են մինչեւ 160 կՎ/ժամ հզորություն:

«Team Energy-ն Team Telecom Armenia-ի հեռանկարային նախագծերից է, որը էլեկտրական մեքենայով տեղաշարժվելը Հայաստանում դարձնում է առավել հարմարավետ, իսկ Visa-ի մասնակցությամբ՝ էլ ավելի մատչելի: Սա Team-ի ու Visa-ի համագործակցության առաջին փորձը չէ. համատեղ ծրագրեր իրականացնում ենք 2021 թվականից՝ ձեւավորելով գործընկերային օրինակելի հարաբերություններ ի շահ մեր հաճախորդների»,- նշում է Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

«Մեր գործընկերների հետ համագործակցությամբ Visa քարտապանների համար բարձր մակարդակի ծառայությունների մատուցումը մեր բիզնեսի հիմքն է: Team Telecom Armenia-ի հետ այս համագործակցությունը օգուտ կբերի ինչպես մեր հաճախորդներին, այնպես էլ մոլորակին: Այս նախաձեռնությամբ Visa-ն Հայաստանում ընդլայնում է կայունության իր ջանքերը եւ ընդլայնում էկոլոգիապես գիտակից հաճախորդների փորձը: Մենք հավատում ենք, որ ամբողջ աշխարհում անկանխիկ տնտեսություն վարելը ծառայում է մեր հաճախորդների եւ այն միջավայրի լավագույն շահերին, որտեղ մենք բոլորս ապրում ենք», - ասում է Կովկասում Visa տարածաշրջանային մենեջեր Դիանա Կիգուրաձեն:

Առաջարկը գործում է նոյեմբերի 16-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ: Team Energy հավելվածը հասանելի է App store-ում եւ Play market-ում: Այն հնարավորություն է տալիս գտնել մոտակա լիցքավորման կետերը, հեշտությամբ կատարել լիցքավորում եւ վճարել բանկային քարտի միջոցով, իսկ Team Telecom Armenia-ի բաժանորդ լինելու դեպքում՝ նաեւ Team-ի հեռախոսահամարի հաշվեկշռից:

Team Telecom Armenia-ի մասին

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Ընկերությունը առաջին տելեկոմն է, որը հաջողությամբ իրականացրել է IPO Հայաստանում՝ դառնալով էլ ավելի բաց ու հանրային: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը, որը կապահովի որակյալ ինտերնետով Հայաստանի բոլոր բնակիչներին:

Visa Inc.-ի մասին

Visa-ն (NYSE: V) թվային վճարումների համաշխարհային առաջատարն է, որը հեշտացնում է գործարքները սպառողների, վաճառողների, ֆինանսական հաստատությունների եւ պետական կառույցների միջեւ ավելի քան 200 երկրներում եւ տարածքներում: Մեր առաքելությունն է կապել աշխարհը ամենանորարար, հարմար, հուսալի եւ անվտանգ վճարային ցանցի միջոցով՝ հնարավորություն տալով անհատներին, բիզնեսներին եւ տնտեսություններին բարգավաճել: Մենք հավատում ենք, որ տնտեսությունները, որոնք ընդգրկում են բոլորին ամենուրեք, նաեւ բարձրացնում են բոլորին եւ ամենուրեք, եւ կարծում ենք, որ ապագայում փողերի շարժի հիմքը հասանելիությունն է: Ավելին՝ Visa.com կայքում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՏՄՈՒՄ Է

ՀՈՒՇԵՐ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒՄԻՑ

«Շատ դժվար օրեր ենք քաշել բլոկադայում: Ես չեմ կարող ասել, որ այդ օրերին մենք ադրել ենք, կարող եմ միայն ասել, որ գոյություն ենք ապահովել»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմում է Արցախից բռնի տեղահանված Սրբուհի Սաֆարյանը:

«Օրեր էին լինում՝ հերթերից դափ-դատարկ էինք վերադառնում: Համարյա ոչինչ չկար, իսկ եղածից էլ շատ բան չէինք կարող գնել. թանկ էին: Զգտում էինք գոնե երեխաների ամենօրյա հացն ապահովել, որ սոված չմնան: Ես էի ազատ՝ ես էի հերթ կանգնում, ամուսինս էր ազատ՝ ամուսինս էր կանգնում: Այդպես իրար օգնելով՝ հերթում օրեր էինք գլորում: Դժվար էր, բայց հուսահատություն չկար մարդկանց մոտ: Դեռ շատերս համոզված ասում էինք՝ որ այսքան երկար է ձգվում, ուրեմն վերջում լավ է լինելու»,- պատմում է Սրբուհին:

Սրբուհին ամուսնու եւ երեք երեխաների հետ ապրել է Մարտունու շրջանի Նոր Շեն գյուղում ամուսնու մեծ ընտանիքի հետ: Գյուղում աշխատանք չգտնելու պատճառով տեղափոխվել էին Ստեփանակերտ:

«Ամուսինս ծառայությունից հետո համալրել է Պաշտպանության բանակի սպայական շարքը: Ծառայում էր Ստեփանակերտի «Ցոր» զորամասում: Որպեսզի ամեն օր երկար ճանապարհ չկտրի Ստեփանակերտ հասնելու համար, տուն վարձեցինք եւ տեղափոխվեցինք Ստեփանակերտ: Մասնակցել է քառօրյա, 44-օրյա եւ այս վերջին պատերազմին: Ուղիղ 19 տարի ծառայել է ՊԲ-ում եւ երբեք ոչինչ չի պատմել առաջնագծից՝ թե՛ լավ, թե՛ վատ: Տեղյակ չէի՝ ինչ իրավիճակ է այնտեղ, եւ երբ ասում էի՝ պատերազմ էլ չի լինի, ասում էր, որ պատերազմը դեռ չի ավարտվել: Անկեղծ, ես պատերազմին չէի սպասում...»,- ասում է Սրբուհին:

Երկու օր ապաստարանում անցկացնելուց հետո միայն Սրբուհին հավաքեց իր առաջնային իրերը: Ինչպես նա է պատմում, շատ բան չի էլ վերցրել, ասում է. «Սիրտս չէր գնում տան իրերս բաժանբաժան անել»: Տնից ոչինչ չի վերցրել, միայն անձնական իրեր եւ երեխաների համար մի քանի շոր:

«Սեպտեմբերի 20-ին Քրքչանից (Կրկժան) Ստեփանակերտ իջնել էր ցանկանում թշնամին, կրակոցներն անգամ հասնում էին Վերածննդի հրապարակ: Այդ ժամանակ կառավարության եւ քաղաքապետարանի ապաստարաններում էին գտնվում նաեւ գյուղերից տեղահանվածները: Կրակոցներից հետո պարզվեց, որ թշնամին, 50 զոհ տալով, նահանջել է, Կրկժանի վերեւում գտնվող մի աղբյուր կա, այնտեղ: Մի քիչ հանգստացանք՝ հույս ունենալով, որ կստիպենք էլի նահանջել թշնամուն, սակայն դրան հաջորդեց այն հայտարարությունը, որ, ըստ շրջանների, պետք է լքենք Արցախը: Սեպտեմբերի 23-ին վերադարձավ ամուսինս, իսկ սեպտեմբերի 27-ին դուրս եկանք Ստեփանակերտից: Ամբողջ ճանապարհին աղոթել եմ, որ ողջ-առողջ անցնենք Հակարին»,- վերհիշում է մեր զրուցակիցը:

Սրբուհին ընտանիքի հետ հիմա ապրում է Արագածոտնի Արագած գյուղում: Տունը դժվար են գտել, բայց, համեմատած այլ տների, վարձը թեթեւ էր: Երեխաներն արդեն դպրոց են գնում, իսկ իրենք փորձում են աշխատանք գտնել, որ կարողանան հոգալ ընտանիքի հոգսերը:

ՊԱՅԹՅՈՒՆ

ՆԵԼՍՈՆ ԱՐԴԵՆ ՏԱՆՆ Է

Սեպտեմբերի 25-ին Ասկերանի շրջանում գտնվող վառելիքի պահեստում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով պաշտոնապես տուժել է 290 մարդ: Պայթյունի վայրում էր նաեւ 17-ամյա Նելսոն Սարգսյանը իր հոր՝ Աշոտ Սարգսյանի հետ:

«Կամաց-կամաց առաջ էինք գնում, որ բենզինը վերցնենք ու դուրս գանք, ու էդ պահին չհասկացա, թե ինչ կատարվեց: Ճիշտն ասած, գիտեի, թե մահացել եմ: Մինչեւ ուշքի եմ եկել, արդեն ուշ էր, վառված էի: Ձեռքերս ցավում էր, երբ փորձում էի դուրս գալ: Ընկնելու պահին շատերը վազում էին, ոտքերի հարվածներից եմ ուշքի եկել: Մի անգամ դուրս եմ եկել փոսից, նորից ուշաթափվել: Հետո հորեղբայրս օգնեց դուրս գամ: Պանելը ծռված էր, չէր պոկվել, թեք վիճակում էր, կոտրելուց փոսեր էր առաջացել, այդտեղից եմ բռնել եւ բարձրացել, հորեղբայրս էլ թիկունքիցս հրեց եւ օգնեց, որպեսզի դուրս գամ: Հետո հորեղբայրս օգնեց հորս, դուրս եկան: Գնացել ենք օդանավակայան, հայրս դեռ լավ էր, ման էր գալիս, հագուստներս հանել են, վիրակապել մեր ձեռքերը: Շատ մարդ կար այդ վիճակում»,- մեզ հետ զրույցում նշում է Նելսոնը:

Սեպտեմբերի 19-ի մարտական գործողությունների հետեւանքով Սարգսյանների ընտանիքը նույնպես ստիպված լքեց իրենց տունը. թշնամին արդեն իրենց թաղամասում էր: Մի քանի օր անց, երբ սկսվեց բնակչության տարհանումը, լսելով, որ Ասկերանի շրջանում գտնվող վառելիքի պահեստում բենզին կա, շտապեցին այդ տարածք անհրաժեշտ վառելիքը գտնելու եւ ընտանիքը Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու նպատակով:

«Ամուսինս երեխայի հետ գնաց բենզինի հետեւից, ավտոբուսներով տեղափոխվելը չէր ստացվում: Մորաքրոջ որդին ասել էր, որ իր ընկերոջ մեքենան կարող է վերցնել եւ երեխաներին տեղափոխել: Երեխայի հետ գնաց, որ բենզին վերցնի, ես չէի էլ իմացել, որ գնացել են Հայկազով, ասաց «Ֆլեշ»-ում ենք, էսա կվերցնենք ու կգանք: Ժամը 5-ն անց էր, զանգեցինք, ասացինք՝ ուր եք մնացել, ինչու չեք գալիս, ասաց՝ բենզինը պայթել է, վառվել ենք, ես, Նելսոնս ռուսների մոտ ենք: Վախեցած վազեցինք դուրս, մեքենա չկար, մի կին իր երեխայի հետ պատրաստվում էր գալ Հայաստան, իրերի մոտ մեզ նստեցրեցին, գնացինք ռուսների մոտ: Չէին թողնում՝ մենք տեսնեինք, փեսայից էլ տեղեկություն չկար: Գնացինք պայթյունի տեղը, քուրս կանչում էր՝ Արթո՛ւր, Արթո՛ւր, մենք էլ նայում էինք, չկար: Մենք էլ գնացինք հիվանդանոց, մանկական հիվանդանոց ենք գնացել, ամեն տեղ նայել՝ դիահերձարանում, Արթուրին չենք գտել: Մինչեւ հիմա չենք գտել, անհայտ է: Մեկ ամսից ավել է, Նելսոնը հիվանդանոցում էր, մի քանի օր առաջ ենք եկել, շաբաթը երկու անգամ տանում ենք վիրակապելու: Քույրս է այս տունը վարձել, իմ աղջիկներին էլ հետը պահել, ամուսինս հիվանդանոցում 9 օր է մնացել, մահացել: Հիմա միայն ես եմ երեխաների հետ, չգիտեմ՝ ոնց պիտի աշխատեմ էս անծանոթ տեղը, Նելսոնը վիրահատություն ունի, վիրակապելու պիտի տանենք: Միակ խնդրանքս, որ գոնե օգնեն տնով, որ կարողանամ երեխաներիս հավաքեմ, մի կերպ պահեմ մինչեւ...»,- եզրափակում է Լիլիա Մարդյանը՝ Նելսոնի մայրիկը:

ՍՊՈՐՏ

ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼ՝ ՇԱԽՄԱՏՈՒՄ

Հայաստանի շախմատի տղամարդկանց ընտրանին դարձել է Եվրոպայի թիմային առաջնության բրոնզե մեդալակիր:«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում ընթացող առաջնության վերջին տուրում Հայաստանի տղամարդկանց թիմը մրցեց Անգլիայի հետ եւ առավելության հասավ 2,5-1,5 հաշվով:

Ընտրանու կազմում հաղթանակ տոնեց Շանթ Սարգսյանը՝ պարտության մատնելով Մայքլ Ադամսին: Հայկ Մարտիրոսյանը, Գաբրիել Սարգսյանը եւ Սամվել Տեր-Սահակյանը ոչ-ոքի ավարտեցին պարտիաները: Հայաստանի տղամարդկանց թիմը մրցաշարային աղյուսակում զբաղեցրեց 3-րդ հորիզոնականը: Առաջին եւ երկրորդ տեղերում հաջորդաբար Սերբիայի եւ Գերմանիայի թիմերն են:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՀԱՅՏՆԵԼ

Մադրիդի «Ռեալի» իսպանացի խաղացողներ պաշտպան Դանիել Կարվախալն ու հարձակվող Խոսելուն սոցիալական ցանցերում արած գրառումներով աջակցություն են հայտնել «Բարսելոնայի» եւ Իսպանիայի հավաքականի 19-ամյա կիսապաշտպան Գավիին, որը ծնկի ծանր վնասվածք է ստացել Վրաստանի թիմի դեմ «Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարի վերջին տուրի խաղում (3:1) եւ բաց կթողնի առնվազն կես տարի:

«Մրցակիցներ եւ գործընկերներ ենք, բայց առաջին հերթին մարդ ենք: Դու կվերադառնաս ավելի ուժեղ, ի՛մ ընկեր: Հաջողություն եմ մաղթում քեզ»,- գրել է Կարվախալը:

«Այս հաղթանակը պարտությունից վատ էր: Դու ֆանտաստիկ տղա ես, որը խիզախությամբ կհաղթահարի այս իրավիճակը: Չտխրես: Բոլորս քեզ աջակցում ենք»,- գրել է Խոսելուն:

Գավին ստացել էր աջ ծնկի խաչաձեւ կապանների եւ արտաքին մենիսկի պատռվածք: Նա կվիրահատվի:

Ընթացիկ մրցաշրջանում Գավին «Բարսելոնայի» հետ մասնակցել է 15 հանդիպման, խփել է 2 գոլ, կատարել 1 գոլային փոխանցում:

ԿԵՐԿԱՐԱՁԳԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Վրաստանի հավաքականի եւ Իտալիայի չեմպիոն «Նապոլիի» 22-ամյա կիսապաշտպան Խվիչա Կվարացխելիան կերկարաձգի պայմանագիրը նեապոլյան ակումբի հետ մինչեւ 2028թ. հունիս. հաղորդում է twitter.com/NicoSchira-ն:

Կվարացխելիայի աշխատավարձը կբարձրանա եւ կկազմի տարեկան 4 միլիոն եվրո: Կնախատեսվի նաեւ պայմանագիրը մինչեւ 2029 թվական երկարաձգելու հնարավորություն:

Կվարացխելիան «Նապոլիին» միացել է 2022թ. հուլիսին: Նրա գործող պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2027թ. հունիս:

Իտալիայի ընթացիկ առաջնությունում Կվարացխելիան մասնակցել է 11 հանդիպման, խփել է 3 գոլ, կատարել 3 գոլային փոխանցում:

● *Նոյեմբերի 23-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Մեծապատիվ մուրացկաններ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ 1-ին անգամ հիփոթեքային վարկի տոկոսների չափով եկամտահարկի գումարների վերադարձման համար:

Հասմիկ Գեղամյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հիփոթեքային վարկի վճարված տոկոսների չափով եկամտային հարկի գումարի վերադարձման ծրագրից առաջին անգամ օգտվողներն անհրաժեշտ փաստաթղթերը հարկային մարմին պետք է ներկայացնեն առձեռն կամ փոստով. հայտնում են ՊԵԿ-ից:

Անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հաստատման հայտ: Հայտին կից վարկառուի կողմից հարկային մարմին են ներկայացվում հետեւյալ փաստաթղթերը եւ դրանց լուսապատճենները՝

1.վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ,

2.վարկառուի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, ՀՎՀՀ-ն (առկայության դեպքում),

3.հիփոթեքային վարկի տրամադրման պայմանագրի բնօրինակ կամ այդ պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճենը, հիփոթեքային վարկի պայմանագրի մարման ժամանակացույցը եւ հիփոթեքային պայմանագրի շրջանակներում ձեռք բերվող՝ գրավադրված գույքի սեփականության (կամ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի կամ գույքի կառուցապատման իրավունքի) պետական գրանցման վկայականը,

4.կառուցապատողի կողմից տրված տեղեկանք՝ բնակարանը կամ անհատական բնակելի տունն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված (բերվող) լինելու մասին, կամ անհատական բնակելի տան շինարարության թույլտվություն,

5.բնակարանի կամ անհատական բնակելի տան առուվաճառքի պայմանագիր կամ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի մասին կամ բնակարանի կառուցապատման իրավունքի ձեռք բերման պայմանագրի բնօրինակ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական եկամուտների կոմիտեի կողմից եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հայտի հաստատումից հետո անհրաժեշտ է գրանցվել «Անհատական հաշիվների տեղեկատվական պորտալ»-ում եւ ուղարկել էլեկտրոնային դիմումն ընդհանուր սահմանված կարգով: Էլեկտրոնային հարթակից օգտվելու քայլերի հաջորդականությունը ներկայացված է տեսաուղեցույցում: Վարկառուն, բացի էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումից, հարկային մարմին այլ փաստաթղթեր չի ներկայացնում:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:

Սյուզաննա Մարգարյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երեխային փաստացի խնամող ընտանիքի մոր (խորթ մոր), հոր (խորթ հոր) կամ խնամակալի ցանկությամբ տրամադրվում է երեխայի խնամքի արձակուրդ մինչեւ երեխայի երեք տարեկան դառնալը: Արձակուրդը վերցվում է ամբողջությամբ կամ մաս առ մաս: Նման իրավունք ունեցող աշխատողն այն կարող է ստանալ հերթականությամբ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Լաս Վեգասում կայացած «Ֆորմուլա 1»-ի մրցավազքում Ռիհաննան ոտքին կրել է 400 հազար դոլար արժողությամբ Jacob & Co ժամացույցը:

Պատվերով պատրաստված ժամացույցը պատված է մոտ 70 կարատանոց կլոր եւ քառակուսի ադամանդներով:

Ժամացույցի թեւնոցը զարդարված է երեք շարք ադամանդներով: Ժամացույցի պատյանը եւ թեւնոցը պատրաստված են 18 կարատանոց սպիտակ ոսկուց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 - 7 + 1 + 5
Կոտայքի լեռներ	- 1 - 5 + 1 + 4
Կոտայքի նախալեռներ	+ 1 + 3 + 5 + 8
Գեղարքունիք	- 2 + 7 + 2 + 5
Լոռի	- 4 + 1 + 3 + 8
Տավուշ	- 1 + 3 + 5 + 9
Արագածոտնի լեռներ	- 2 - 6 0 + 3
Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 3 + 6 + 10

Արարատ	+ 4 + 7 + 11 + 13
Արմավիր	+ 3 + 6 + 11 + 13
Վայոց ձորի լեռներ	0 + 5 0 + 2
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 8 + 11 + 3
Սյունիքի հովիտներ	+ 1 + 5 + 8 + 12
Սյունիքի նախալեռներ	0 - 4 + 2 + 6
ԼՂՀ	0 - 3 + 3 + 7
Երեւան	+ 2 + 4 + 9 + 11

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*